

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարությունը (այսուհետ՝ Նախարարություն) հայտարարում է Նախարարությունում քաղաքացիական ծառայության հետևալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու մասին

Գյուղատնտեսական ծրագրերի իրականացման վարչության պետ (30-2.1-34)

Վարչության պետը՝

- ապահովում է Վարչության կողմից իրականացվող միջազգային զարգացման և շինարարական ծրագրերի, հայեցակարգերի մշակման ինչպես նաև մոնիթորինգի իրականացման աշխատանքները, Վարչության կողմից իրականացվող միջազգային զարգացման և շինարարական ծրագրերի, տարեկան աշխատանքային պլան-բյուջեի /ՏԱՊԲ/ մշակման և իրականացման աշխատանքները, գյուղատնտեսության ոլորտի քաղաքականության իրականացումից բխող արդյունքների ուսումնասիրության և համապատասխան միջոցառումների կիրառման գործընթացները, միջազգային զարգացման և շինարարական ծրագրերի, ֆինանսական հաշվետվությունների վերստուգման հետ կապված աշխատանքները, շինարարական աշխատանքներում ընդգրկված կազմակերպությունների՝ (կապալառուներ, նախագծողներ, պետական գերատեսչություններ, տեխնիկական հսկողություն իրականացնողներ և այլն) հետ աշխատանքների իրականացումը,

- հաստատում է միջանկյալ կատարողական վկայագրերը և այլ օժանդակ փաստաթղթերը,

- ապահովում է շինարարական աշխատանքների ընթացքում առաջացած խնդիրների լուծումները, ինչպես նաև նոր ծրագրերի հայտ-առաջարկների կազմման և ներկայացման, ինչպես նաև իրականացման գործընկերների և ֆինանսավորման նոր աղբյուրների որոնման աշխատանքները,

- իրականացնում է քաղաքացիական ծառայության պաշտոնի անձնագրով սահմանված այլ լիազորություններ:

Նշված ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու համար պահանջվում է՝

- տնտեսագիտություն կամ կառավարում մասնագիտությամբ բարձրագույն կրթություն, քաղաքացիական ծառայության առաջատար պաշտոնների առնվազն 2-րդ ենթախմբում առնվազն երկու տարվա ստաժ կամ առնվազն երեք տարվա քաղաքացիական ծառայության ստաժ և քաղաքացիական ծառայության 2-րդ դասի առաջատար ծառայողի դասային աստիճան կամ վերջին հինգ տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական բացառությամբ Հայաստանի Հանրապետության համայնքների ղեկավարների տեղակալների, խորհրդականների, մամուլի քարտուղարների, օգնականների և ռեֆերենտների պաշտոնների, կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն երկու տարվա աշխատանքային ստաժ կամ համայնքային ծառայության գլխավոր պաշտոնի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, կամ գիտական աստիճան և առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ վերջին տասը տարվա ընթացքում առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում, կամ մինչև 2019 թվականի հուլիսի 1-ը

պետական կառավարման ոլորտի առնվազն երեք տարվա աշխատանքային ստաժ, որից առնվազն մեկ տարին ստորաբաժանման ղեկավարի պաշտոնում.

• ՀՀ Սահմանադրության, «Քաղաքացիական ծառայության մասին», «Միջազգային պայմանագրերի մասին» ՀՀ օրենքների, ՀՀ վարչապետի 2018 թվականի հունիսի 11-ի «ՀՀ գյուղատնտեսության նախարարության կանոնադրությունը հաստատելու մասին» N 742-Լ որոշման, ՀՀ կառավարության «Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարությունը և Հայաստանի Հանրապետության գյուղի և գյուղատնտեսության 2010-2020 թվականների կայուն զարգացման ռազմավարության կատարումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին» 2010 թվականի նոյեմբերի 4-ի N 1476-Ն որոշման և իր լիազորությունների հետ կապված իրավական այլ ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.

- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.

Աշխատավարձը՝ 310,858 (երեք հարյուր տասը հազար ութ հարյուր հիսունութ) ՀՀ դրամ

Լրացուցիչ տեղեկությունների համար քաղաքացիները կարող են դիմել ՀՀ գյուղատնտեսության նախարարության անձնակազմի կառավարման բաժնի /ք.Երևան, Հանրապետության հրապարակ, Կառավարական տուն 3, հեռ. 011-52-58-57/:

Տվյալ ժամանակավոր թափուր պաշտոնը զբաղեցնելու ժամկետը սահմանվում է մինչև նշված թափուր պաշտոնը մրցույթի արդյունքում հաղթող ճանաչված մասնակցի կողմից զբաղեցնելը:

Դիմող ՀՀ քաղաքացիները պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝

- գրավոր դիմում,
- անձնագրի կամ անձը հաստատող այլ փաստաթղթի պատճենը,
- սոցիալական քարտի պատճենը,
- կրթությունը հավաստող պետական նմուշի փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - աշխատանքային գործունեության մասին վկայող փաստաթղթի (փաստաթղթերի) պատճենը (պատճենները),
 - արական սեռի անձինք նաև զինվորական գրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենը՝ բնօրինակի հետ միասին, կամ համապատասխան տեղեկանք,
 - մեկ լուսանկար 3x4 սմ չափսի:

ՀՀ քաղաքացին փաստաթղթերը հանձնում է անձամբ՝ ներկայացնելով անձնագիր կամ անձը հաստատող այլ փաստաթուղթ:

Փաստաթղթերն ընդունվում են ամեն աշխատանքային օր՝ ժամը 9:30-ից մինչև 12:30-ը:

Դիմումների ընդունման վերջնաժամկետն է՝ 14.05.2019թ.